

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԺԱ — ԺԵ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՅՑԹԻ

ՄԻ ՔԱՆԻ ՑԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սկիզբը տեսմել Սին, 1976, ԺԲ) :

Թարգմանչական գործը ևս ընթացքի մէջ էր :

ԺԲ դարի սկզբից գրականութեան մարզում նկատուած աշխուժացումը աստիճանաբար աւելի մեծ ծաւալ ու թափ է ստանում և համում գրական-մշակութային նոր աստիճանի և նոր որակի՝ չնորհիւ յատկապէս ներսէս Շնորհայու, ներսէս Լամբրոնացու, Գրիգոր Տղայի, Մխիթար Գոշի մատենագրական հարուստ ու լիարժէք ժառանգութեան։ Գրականութեան ընդերքում աստիճանաբար հասունանում են այն բոլոր առարկայական նախադրեալները, որոնք, անարակոյս, նպաստեցին ու բերրի հող հանդիսացան հայ քնարերգումնեան զարգացման համար նաև հետազայ զարերում։ Իրենց նշանակութեամբ, պատմանախանչողական արժէքով, երկրի քաղաքական, ընկերային-տնտեսական, իրաւական և հոգևոր-մշակութային վիճակը բացայացնելու տեսակէտից կարենու նշանակութիւն են ստանում պատմագրական երկերը։ Արիստակէս Լատոիֆերտոցու «Պատմութիւնն», Մատթէոս Ռուհայեցու, Սամուէլ Անեցու, Մխիթար Անեցու Ժամանակագրութիւնները, այլ մանր ժամանակագրութիւնները, վարժողական, խրատական երկեր, յիշատակարաններ, թղթեր, որոնցում ևս պատմական երբեմն շատ արժէքաւոր նիւթ է ամբարուած, կարևոր սկզբնադրիւրներ են տուեալ ժամանակի ընդհանուր պատկերը արտացոլելու տեսակէտից։

Մատենագրութեան ասպարէզում հետաքրքիր երևոյթ է Դաւիթ Ալավեկառորդու կանոնագրական համեստ, բայց արժէքաւոր ժառանգութիւնը, որը բաղկացած է չուրջ 100 կանոններից։ Դրանք ըստ մեծի մասին առնչում են կը բօնական ու եկեղեցա-վարչական խնդիրներին, բայց և արտացոլում են ժամանակի հայկական միջավայրը, կենցաղը, ընկերային-տնտեսական և իրաւական սիհնակը։ Դրանք որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նախադրչեան ժամանակաշրջանին հայ իրաւական մտքի ուսումնասիրութեան համար։ Մ. Արեգեանի բնութագրմամբ, գրանք «նոր մտաւոր հոսանքի» ծնունդ են հանդիսանում¹¹։ Այս տեսանկիւնից Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»ը նոյնիսկ համաշխարհային չափանիչով վիթխարի նուաճում է, հայ իրաւագիտական և ընկերային-տնտեսական մտքի եղակի կոթող ու պատմանանաչողական մէծարժէք յուշարձան։

Այս կապակցութեամբ յիշատակութեան արժանի է նաև այն փաստը, որ Ն. Լամբրոնացին անհրաժեշտ նկատեց թարգմանելու ըիւղանդական օրէնք-

¹¹ Մ. Արեգեան, Երկեր, Հատոր Դ, Երևան, 1970, էջ 65։

ները, անշուշտ ելակէտ ունենալով Հայ ժողովրդի հասարակական կեցութիւնը յատկապէս կիլիկիայում:

Թիստ յատկանշական է սոյն երկի նաև հասարակական-քաղաքական կողմնորոշումը, որը գարազրջանի քաղաքական իրավիճակի իրավաշտ վերլուծութեան և պետական ճշգրիտ մտածողութեան շատ կարևոր տեսակարար կրչիո ունեցող արդարութիւն է: Այս առնչութեամբ անուանի բանասէր է, Պիվագեանը զրում է: «Եթէ Արքատակէս Լատուիկերտցին ողրում էր ազգային թշուտառութիւնը, Յովհաննէս Սարկաւաղը ազօթում էր, որ վարատուած Հայ ժողովուրդը Տիրոջ առնութեամբ հաւաքուի և փրկուի, Ներսէս Շնորհալին Խաչակրաների օգնութեամբ արևելեան քրիստոնեաների «լաւ օրերի ու վերածաղկման» երազն էր առաջադրում՝ չունենալով Հայաստանի անկախութեան, Հայոց թագաւորութիւնը բուն Հայրենիքում վերականգնելու կոռուաններ, ապա Մխիթարը ուներ բաղաքական պատութեան իրական հեռանկար և համոզուած էր, որ կը վերականգնուի հայկական թագաւորութիւնը: Ըստ որում նա յոյս կապում էր ոչ թէ արտաքին միջամտութեան, այլ երկրի ներքին, սեփական և ժերի հետո (Ընդդուռը մեր է — Փ. Ա.)¹²:

Հայկական միջնադարեան արուեստը մինչև ԺԲ: Դար արդէն անցել էր զարդացման բաւական երկար ժի շրջան, փոխադարձարար առնչուել միւս ժողովուրդների արուեստներին, բայց նաև երկնել իր յատկանիշներն ու աւանդները: Բոլոր ճիւղերում էլ այն, յատկապէս մինչև Ժ դարը, հանդէս է գտյալ իր անպահոյն ու դրւագ, սակայն խորապէս տպաւորիչ և առինքնող Հմայքով: Քարեղին յուշարձանները, մանրանկարչական նմուշները, զարդարուեստը, շարսկանները, անդամ աւանդաբար փոխանցուած երած չուութիւնը միզ ներկայանում են արդպէս՝ ճեկրի, զծերի, զոյների չուայցութիւնից միանդամոյն տպատ, մարդկային հոգուն և մտածողութեանը սերտօրէն հազորդակից: Ժ դարեց, ինչպէս Հաստատում են մասնագէտները, որոչ տեղաշարժ, ներքին և արտացին կերպարանափոխում, տպաւորիչ արտաքին արտայայտականութիւն, մոխացման որոշակի միտում նկատում է՝ ընկերային-տնտեսական նոր, առաւել նապաստաւոր իրադրութեան պատճառով:

Հայկական արուեստի հետագայ զարդացման համար բնորոշը, թէոյէ միառժամանակ աւելի զանդադ և աւելի մեղմ, քան Ժ դարում, միտումն է դէսի զարդարանքը, դէսի բարդացուած, մասսմբ թերիս խճողուած համադրութիւնները արուեստի բոլոր բնագաւառներում (ճարտարապետութիւն, մանրանկարչութիւն, երաժշտական պատճառով):

ԺԱ-ԺԲ: Դարերում որոշ վերիկվայրումներով, որոնք արդիւնք են այդ ժամանակաշրջանի բուն Հայաստանի և Կիլիկեան Հայկական իշխանութեան քաղաքական պատմութեան և ընկերային-տնտեսական կեանքի անվայուն իրավիճակի, Հայ արուեստը շարունակում է իր զարդացման վերընթաց ուղին՝ Հարստանալով նոր ճեկրով ու երանգներով: Ճիշտ է, Կիլիկեան Հայկական իշխանութեան պայմաններում ու նրա չնորհիւ այն աւելի լայն ու սերտ առնչութիւնների մէջ է մտնում բիւզանդական, ասորական, արարական, Հետազայում՝ արևմտա-լատինական արուեստի և մշակոյթի հետ, սակայն առանձնապէս նշուած ժամանակաշրջանում ամուր էր պահում իր ազգային աւանդները և ստեղծագործարար վերամշակում դրանք ըստ նոր պայմանների ու Հնարաւորութիւնների:

¹² Ե. Պիվագեան, Մխիթար Գոշ («Հայ մշակոյթի նշանաւոր գործիչները V-XVIII դ.դ.»), Երևան, 1976, էջ 285:

Այսպէս, հայ ճարտարապետութիւնը շարունակում է զարգանալ՝ ճարտարապետական ձևերի, զարդաքանդակների և լրացուցիչ կառոյցների բազմազանութիւնն ու ճոխութիւնը դարձնելով առաւել ցայտուն յատկանից:

Յատկապէս չէնքերի ճակատային մասերում երեան եկող զարդաքանդակների նկատելի շոայլութիւնը որոշակի խախտումն էր նախկինում կառուցուած յուշարձանների համապատասխան մասերի զասական զսպուածութեան: Մի շարք տաճարների, պալատական չէնքերի ու քաղաքային մենատների որմերի չքեղ նկարազարդումները ևս նոյն են հաստատում: Նշանակալի տեղ է տրուում արտաքին, ձևական արտայայտութիւններին, մասնաւորաբար ծաւարուն զարդապատկերներին և միջանկեալ յարդարանքներին: Կրօնապաշտամունքային բազմաթիւ շինութիւններ են կառուցւում (Անիի տաճարները, Սանահին, Հաղպատ, Կեչառիս և այլն): Մեծ թափ է ստանում քաղաքացիական և աշխարհիկ շինարարութիւնը, յատկապէս բուն Հայաստանում: Առևտրական խաւի կարկառուն ներկայացուցիչների՝ մեծատունների ներդրած հսկայ գումարներով կառուցւում են փարթամ բնակարաններ, առանձնատներ, հիւրանցներ, խանութներ, արտազրական-ձեռնարկային չէնքեր, կարաւանատներ և այլն: Գետերի վրայ նոր կամուրջներ են գցուում, բազմաթիւ ճանապարհներ են բացուում, բարելաւուում են հները, ընդարձակւում և կատարելազորդւում է ջրմուղային ցանցը: Հետաքրքիր երեսոյթ է Անիի ստորգետնեայ քարանձաւների շարքը: Տաճարներին առընթեր զանազան տնտեսութիւնների համար ստեղծուում են լրացուցիչ մեծ ու փոքր շինութիւններ՝ յատկապէս գտւիթներ, ժամաներ, սեղանատներ, ձեռագրատներ և այլն: Ճարտարապետական նոր շինութիւններով ամբողջացւում են նաև պալատական միջնաբերդերն ու բազմաթիւ ամբոցներ:

Այս կարգի նոր կառոյցների շնորհիւ փաստօքն ստեղծուում են ճարտարապետական ամբողջական համալիրներ, որոնցում առաւել չափով ներդրուում են աշխարհիկ, քաղաքացիական ճարտարապետութեան աւանդները: Բը նական է, բատ այսմ էլ պահանջնուում էին կառուցողական-ճարտարապետական նոր որոնումներ, նոր, աւելիր բարդ լուծումներ տեխնիկական, գործնական, տնտեսական ու զեղագիտական տեսակէտից: Կատարելազորդւում են քաղաքամրոցաշինական արուեստն ու վարպետութիւնը: Ոճական զգալի փոփոխութիւն է նկատուում նոյնիսկ խաչքարների զարդարուեստի մէջ: Նախկին պարզ, զուսպ, պաճուճանքներից զուրկ ձևերն աստիճանաբար նահանջուում են, փոխարէնը քարերին դրոշմուում են ճոխ, հիւսածոյ, մանուածապատ ու բարդ զարդամուշներ:

Առաւել կարեորութիւն է տրուում տեղանքի ընտրութեանը: Միաժամանակ չեշտուած, ուրոյն որակ են ստանուում ճարտարապետական տեղական բնոյթի առանձին դպրոցներ:

Այսպիսով, զարդացման նոր փուլ է մտնուում հայ ճարտարապետական տեսական միտքը, արուեստը և գործնական-կառուցողական հմտութիւնը, քանի որ խիստ բարգանուում էին նախնական գիտական հաշուարկումները, չափադրումները, գծագրութիւնները, շինարարական հնարքները, որոնք էլ համապատասխան ճարտարապետական-կառուցողական լուծուում էին պահանջուում:

Զարդացման նման ընթացքի մէջ էր նաև հայ արուեստի միւս՝ մեծ և ուշագրաւ բնագաւառը՝ մանրանկարչութիւնը: Ինչքան էլ համեմատաբար սակաւ թիւ են կազմուում այս ժամանակաշրջանուում ծաղկուած զբացիի մտնեանները, այսուամենայնիւ, բաւարար փաստական հիմք են տալիս հետեւելու հայ մանրանկարչութեան զարդացման ընթացքին, ընդհանուր բնոյթին ու առանձ-

նայատկութիւններին։ Նախ, որոշակի նկատելի է, որ բուն Հայաստանում և կիլիկիայում աւելի վաղ նկարագարդուած ձեռագրերի մանրանկարչութիւնը առաւել անփոփոխ ընդհանրութեան մէջ է, քանի որ կիլիկիա էին փոխարժուել բուն Հայաստանում ծաղկուած բազմաթիւ ձեռագրեր, նաև ծաղկողներ։ Նախ էին աւանդներն այստեղ հիմնականում արտայայտութիւն էին դանում պատկերագրման կոթօղային ոճի, կենդանական, բուսական, սարկաւողէպ ճարտարապետական զարդանմուշների նուազ յղկուածութիւն, դռնաշարի պարզ, բայց թանձր, յաղեցուած կիրառման, պատկերագրութեան կանոնականացուած ձևերին ու սկզբունքներին հետեւյու առաւել պահպանողական դիրքորոշման, ինչպէս նաև առաւել պարզունակ թեքնիկ մշակումների մէջ։ Զարգացման հիմնական միտումը դէպի նորաձեւութիւն, շքեղութիւն, բազմերանդ վառ գոյներ, առաւել յղկուած պատկերագրական ոճ ու տեխնիկա, աստիճանաբար աւելի է հաստատում իրեն և հետազայ առաջընթացի ու բարզաւաճման երաշխիք ստեղծում։

Այդ ժամանակների Հայ մանրանկարչութիւնը Հայ և օտար մասնագէտարուեստագէտների բարձր գնահատութեանն է արժանացել։ Իրենց պատկերագրական, սիմետրիային և գունային համադրութիւններով ու լուծումներով, բազմազան զարդամոտիւնների հմտալից ու վայելուչ կիրառմամբ, ոճական առանձնայատկութիւններով և ծաղկող նկարիչների ինքնորոշ անհատականութեամբ, դեղարուեստական մեծ արժէք են ներկայացնում մասնաւորաբար Սանդղայ վանքի, Թալիշի, Մուղնու, Կարսի Գաղպիկ թաղաւորի, Կեչըրի, Տըրապիզոնի, Ակոսիի, Սեբաստիայի, Հռոմելայի, Բաղնայրի և այլ գրչութեան օֆախներում ծաղկուած աւետարանները, 1173թ. Միլճում նկարագրուած «Ըստեկը»-ը և այլն։

Դրանք կեանքի են կոչուել Հմուտ և ստեղծադորձական ուրիշն մտածողութեամբ ծաղկող նկարիչների՝ Կողմայի, Յովհաննէս Սանդղավանեցու, Գրիգոր Ակոսիցու, Գրիգոր Միլճեցու և այլոց կողմից, որոնց անունները դեռևս անդայու են։

Միջնադարեան Հայ արուեստի միւս կարեռ բնադրաւոր՝ երաժշտութիւնը ևս զարգացման այս նոր ոլորտի մէջ է մտնում։ Գիւղական և քաղաքային կեանքի ու կենցաղի զարդացման ընկերային-տնտեսական նոր պայմաններում առաջին հերթին աշխուժանում է ինչպէս գեղջկական, այնպէս էլ քաղաքային-ժողովրդական և գուսանական երդն ու երաժշտութիւնը։ Կենցաղայարութեան աշխարհիկ պահանջներին ի բաւարարութիւն, ոչ միայն աճում են երգաստեղծման առիթներն ու հնարաւորութիւնները, այլև ըստ այդմ, յաղեցւում է երգի և երաժշտութեան ներքին բովանդակութիւնը։ Զուարթ, թեթև և սահուն կշոյովթի հետ այն օժտում էր և վիպարքնարական հիմնական տարրերով։ «Բարձր զարգացման է հասնում նաև Հայ գիւղական, մանաւանդ ժողովրդա-քաղաքային, ու աւելի գուսանական դործիքային նուագը»¹³։

Բնական է սակայն, որ երգի և երաժշտութեան զարգացման թափն ու էութիւնը առաւել յատակութեամբ և ամբողջութեամբ նկատելի է Հայ հոգեորմանագիտական երաժշտութեան մէջ, քանի որ այն ստեղծուել է միջնադարեան Հայ իրականութեան մշակութային կեանքի և զաղափարախօսութեան ա-

¹³ Ե. Թահմիկեան, Քննական տեսութիւն Հայոց հին և միջնադարեան երաժշտութեան, «Լրաբեր Հասարակական գիտութիւնների», 1971, թիւ 5, էջ 34։

ուաջատար օջախներում, պահպանուել ու մեղ է հասեել խիստ պահպանողական միջավայրից :

Նկատելի է, որ տուեալ ժամանակաշրջանում այն նոյնպէս վերընթաց ուղիղ է զարգացել, չեշտը զնելով, թէկուզ նախապէս քիչ զապուած, պերճութեան, հանդիսաւորութեան և ծանր ու «ուղրուն գեղգեղանքով» հարստացած ձայնեղանակների վրայ :

Տաղերգութիւնն ու գանձասացութիւնը ևս աստիճանաբար հաստատուն տեղ են բնուում և իրենց արտայայտականութեամբ զրաւում աշխարհի ու հոգեոր երաժշտութեան միջին, անցման ոյորուները :

Կիրառման նոր, աւելի բարձր աստիճանի է հասնում հայ խաղաղութեան արուեստը :

Հայ երաժտական տեսական ու գեղադիտական միտքը ուրոյն և արժէքաւոր նուանումներ է արձանագրում երգին ու երաժշտութեանն առնչուող բաղմաթիւ հարցերում :

Երաժտութիւնը ուսումնասիրութեան հիմնական առարկայ է եղել Անիի, Հաղպատի, Սանահնի, Սկնուայի, Դրազարկի, Սև լեռան, Կարմիր վանքի, Հոռմելլայի և այդ ժամանակաշրջանի գլխաւոր գիտա-մշակութային և ուսումնասիրական այլ կենտրոններում :

Առաւել անուանի և բեղմնաւոր երաժիշտ-երաժշտագէտներից են՝ Գրիգոր Մագիստրոսը, Պետրոս Գետաղարձը, Յակով Սանահնեցին, Յովհաննէս Սուրկաւազը, Ստեփանոս Մանուկը, Գրիգոր Պահլավունին, Ներսէս Շնորհային, Ներսէս Լամբրոնացին :

Ժամանակի նկարագիրն ամբողջացնող խոչոր երեսյթներից է նաև ժողովրդական լեզուի, միջին հայերէնի շրջանառութեան մէջ դրուելը զրաւոր յուշարձաններում։ Գիտութիւնը, դրականութիւնը, արուեստը զրանով աւելի էլն մօտենում ժողովրդական խաւերին։ Դպրութեան առաւել արդիւնաւէտ և անուանի մշակները «դիւրահաս» կամ «դեղջուկ բանիւ» զրելու փորձեր էին անում և նոյնիսկ ուրիշներին էլ արդէս վարուելու հրահանգ տալիս։ Կասկածից է միջին հայերէնի ծաւալման առաջադիմական նշանակութիւնը ինչպէս ազգային-հասարակական, այնպէս էլ գիտա-մշակութային նկատառումներով։

Այսպիսով, նշուած դարերում հայրենի գիտութեան ու մշակութիւնը զարգման համակողմանի քննութիւնն ու զնահատութիւնը որոշակի հաստատում են այն նորն ու արժէքաւորը, որոնք յատուկ են այդ դարերին։ Մարդը, նրա աշխատանքային առօրեան, կեանքը, բնութեան ու տիեզերքին առնչուող գիտա-փիլիսոփայական տեսական ու գործնական շատ հարցեր, աղջն ու հայրենիքը իրենց պատմութեամբ ու ճակատագրով, համամարդկային վեհ զաղանցիքը, արուեստների զարգացման նորանոր միտունենքը, դէպի այլ ժողովուրդներն ու նրանց գիտա-մշակութային ժառանգութիւնը ցուցարերուած եռանդուն հետաքրքրութիւնը խիստ յատկանշական են այս դարերի համար։

Հայ ժողովուրդն այս ժամանակաշրջանից գալիք սերունդներին է թողել գիտա-մշակութային վիթխարի հարստութիւն։ Անտարակոյս, Հայաստանը բազմաթիւ բնագաւառներում զարգացման համահաւասար մակարդակի վրայ է եղել ժամանակակից քաղաքակիրթ երկրների՝ յատկապէս Ասորիքի և Բիւզանդիոնի հետ։

ՓԱՅՑԱԿ ԱՆԹԱՂԵԱՆ

(Ծար. 2 և վերջ)